

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2007 թ. սեպտեմբերի 2-7-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Բեռլինում (Գերմանիա) կայացած «Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների երկրորդ ազգային ծրագրի նախապատրաստումը և իրականացումը – Հայաստանի և Վրաստանի փորձը» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2007 թ. սեպտեմբերի 3-7-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Վարդանյանը մասնակցել են ք. Օրեբրոյում և Ստոկհոլմում (Շվեդիա) կայացած «Գյուղացիական տնտեսությունների ռեգիստր» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2007 թ. սեպտեմբերի 4-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ջ. Ավոյանը մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Խթանիչ աշխատանք և բարեկեցություն. սոցիալ-տնտեսական մարտահրավերները սևծովյան տարածաշրջանում» թեմայով սեմինարին,
- ✓ 2007 թ. սեպտեմբերի 17-28-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել են ք. Վաշինգտոնում (ԱՄՆ) կայացած «Գյուղատնտեսության վիճակագրությունը» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2007 թ. սեպտեմբերի 18-20-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Կարապետյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստան) կայացած «Գիտության, տեխնոլոգիայի և նորամուծության ցուցանիշներ. միտումներ և խնդիրներ» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2007 թ. հոկտեմբերի 1-3-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Մանիլայում (Ֆիլիպիններ) կայացած «Հազարամյակի զարգացման նպատակների վիճակագրություն» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2007 թ. հոկտեմբերի 2-5-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դանիելյանը մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած «Ազգային հաշիվների և ֆինանսների վիճակագրություն» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2007 թ. հոկտեմբերի 2-5-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Հերցեգ Նովոյում (Զեռնոգորիա) կայացած «Կոմունալ ջրամատակարարման լավագույն

մեթոդները, ֆինանսավորման և իրականացման բարելավումը» թեմայով աշխատանքային հանդիպմանը,

- ✓ 2007 թ. հոկտեմբերի 8-12-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Մ. Ծատուրյանը և առաջին կարգի մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել են ք. Ստոկհոլմում (Շվեդիա) կայացած «Շրջակա միջավայրի վիճակագրություն» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2007 թ. հոկտեմբերի 22-25-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Պեկինում (Չինաստան) «Պարենային ապահովության վիճակագրությունը և տեղեկատվությունը ենթաազգային մակարդակով աղքատ և շատ աղքատ բնակչության որոշման համար» թեմայով աշխատանքային հանդիպմանը: